

ԲԱՍՏԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՈՒԹՅՈՒՆ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 12 Ֆր.
 Վեցամսեայ 6 »
 Արտասահմանի համար
 Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Անկերիկայի համար
 Տարեկան 3 ֆր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԱՆՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒԹՅՈՒՆ
 Իտալացիական տպարանի
 գրքարանի համար 40 սակիքով
 Կ. իսկ վերջին ևրենի համար
 20 սակիքով և ևրենի համար
 20 Օլո գինը կըլայ :
 Վառնայի համար ձեռքի 10 սակիքով

ՇԱՌՓՈՒՄ

Նամակ և գրամ գրկի
 Խմբագրութեան հասցիին
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)
 Գրութեան և շնորհակալութեան
 Արտասահմանի ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պուշկարիոյ համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿՐ ԶՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՔՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

ԱՍՏՈՒ ԶԱՅ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ

Չենք կարծում որ հայ հարուստների պէս ոսկեպաշտ մարդիկ լինեն աշխարհի երեսին. նրանցից մի քանիսը միայն այս աշխարհը թողնելուց յետոյ են հաշտվում իրենց ոսկիներով ու և է բարիք անել իրենց ազգին, իսկ մեծամասնութիւնը թէ կենդանի ժամանակ և թէ մեռնելուց յետոյ իրեն հարստութիւնից մի փոքրիկ բաժին անգամ չէ հանում ու և է հանրային գործի համար :

Մեր տասնամյակ յեղափոխութեան ընթացքում, մի հայ հարուստ չը գտնվեց որ մի տասն հազար բուբին, կամ քրանք մի անգամից նուրիսը մեր ազատագրութեան գործին : Հայաստանի մէջ տասնեակ հազարներով որբեր կան և միայն մի հարուստ հայ գտնվեց որ սիրտ արաւ մի հայ որբանոց ամբողջովին իր հաշուով պահի :

Պարսկաստանի մէջ կենտրոնական դպրոց բանալու խնդիր կայ և չեղաւ մէկը որ քաջութիւն ունենար այդ դպրոցի գոյութիւնը ապահովէր :

Չէ, սպասող ոսկեպաշտ է հայ հարուստների ճնշող մեծամասնութիւնը :

ա. գ. գնահատելի գործը զլուխ բերելու համար, խեղճ հայ հնախոյը այդ գործը յաջողեցնելու համար գիտէ՞ք ինչ է անում. գիտում է հանգանակութեան :

Ամօթ հայ հարուստներին : Բայց զարմանալի է ճշմարտոր հայոց կաթողիկոսը, որի առաջարկութեամբ և կատարվում կատարվում է այդ ճամբորդութիւնը, չէ կարողացել մի միջոց գտնել Պ. Բասմաճեանին այդ գրութեան մէջ չը գնելու համար :

Չանաղան սպուշների վրա հազարներով բուբիններ են ծախվում աստուածաբան ձրիակերներ պատրաստելու համար, իսկ հայ հնախոյը ճամբորդութեան և նրա ուսումնասիրութիւնները հրատարակելու համար դրամ չէ գտնվում : Եթէ հայոց կաթողիկոսը Պ. Բասմաճեանի ուսումնասիրութիւնների մէջ արժանիք է գտնում և նրանց օգտակար է համարում հայոց պատմութեան համար, նա պարտաւոր է և նրա համար միջոցներ հայթայթել : Հայութեան համար ամօթ է որ այդ գործը հանգանակութեամբ կատարվի. մեծ գումարի պէտքը չը կայ :

Վերջապէս մի փոքր ազգային արժանապատւութիւն պէտք է ունենալ :

րանին : Պ. Բասմաճեան երեք տարի ամենագովելի եռանգով և յարատեւութեամբ հետեւեցաւ իմ գասերուս. յիշատակութեան արժանի յառաջդիմութիւն մը ցոյց տուաւ Եթովպական լեզուին մէջ որ իմ գասախօսութեանն էական նիւթը կը կազմէ և որուն կը միանայ կանոնաւորապէս վերջերս Արարիոյ մէջ երեւան ելած սարէական կամ հիմարական ուսումնասիրութիւնը. հետեւեցաւ նաեւ անխոնջ համբերութեամբ Տուրանեան լեզուաց բազմատական քերականական դասերուս. այս ժամանակամիջոցին՝ Օրխոնի և Եէնիսէի Թրքովիւնական կարեւորագոյն արձանագրութիւնք թարգմանեցան և մանրամասն կերպով լուծուեցան : Թրքերէն լեզուին մէջ իր ունեցած խոր հմտութիւնն այս գասախօսութեանց շահեկանութեան մեծապէս նպաստեցին : Յիշեալ կանոնաւոր գասախօսութիւններէն դուրս ամեն կիրակի Պ. Բասմաճեանը տունս ընդունելու հաճոյքը ունեցայ : Ատրեստանեան—Բարեւոյնեան բնագիրներու ընթերցանութեանց և մեկնութեանց համար : Այս ճիւղին մէջ եւս Պ. Բասմաճեան, աշխատութեան սէր մը և անսովոր հանճար մը ցոյց տուաւ : Քանի մը տարիէ ի վեր և խիստ զժուարիին հանգամանքներու մէջ երիտասարդ գիտնականը յաջողեցաւ «Բանասէր» տիտղոսին տակ հայերէն լեզուաւ պատմական և քննական հանդէս մը հիմնել : Այս հաւաքածոն կը հրատարակէ Հայաստանի գրական հին նշխարներն, ձեռագիրներ արձանագրութիւններ և մասնաւորապէս նախաքմենեան ժամանակի վանեան տառերով արձանագրութիւններ : Եւ այս կարեւոր աշխատութիւնը կը կատարուի շատ խնամքով և կանոնաւոր կերպով, որ կը խօստանայ արդիւնաւոր ըլլալ գիտութեան և արժանի է քաջալերութեան : Ահաւասիկ ընտրելին զոր պատիւ ունիմ ներկայացնել ձեր հաճութեան : Իմ պաշտօնակիցս Պ. Մէյնէ, որուն նոյնպէս աշակեր-

տած է Պ. Բասմաճեան հաճեցաւ ձայնակցել ինձ ձեր ընկերութեան յանձնարարելու համար զայն :

Պ. Մէյնէ երեւելի հայագէտը, իր կարգին կարասանէ հետեւալ ճառը :

«Կրնկերակցիմ Պ. Հալէվի բոլոր ըսածներուն, և ալ աւելի Պ. Բ. Բասմաճեանի նկարագիրը յարգելու : Թէեւ բազմէն հալածուած և ստիպուած իր ապրուստը շահելու, նուազ շահաւոր աշխատութեամբ, Պ. Բասմաճեան գրգռուած է այնպիսի բունեւունդով մը և միեւնոյն ժամանակ այնքան անշահախնդ իր գիտութեան և իր սպիտակ նկատմամբ որ, Պ. Հալէվի խօսած ընդարձակ ծանօթութիւններն ստանալէն զատ՝ բոլորովին զուտ գիտական հանդէս մը հիմնելու, վարելու և յառաջացնելու միջոցն իսկ գտած է. աւելին ըսել անօգուտ է անոնց՝ որոնք գիտեն թէ այս կարգի ձեռնարկութիւն մը ինչ աստիճան ճիգ և հաստատամտութիւն կը պահանջէ :

Պ. Միշէլ Թամազէֆ արտօնեալ իրաւաբանութեան մէջ, Ասիական ընկերութեան միակ հայ անդամը, չերմայէս պաշտպանեց մեր ազնիւ պաշտօնակցին ընտրելիութիւնը, և Պ. Բասմաճեան գիտնական ընկերութեան ծափահարութեանց մէջ տեղ մի ահաւանութեամբ անդամ ընտրուեցաւ :

Մեր շեքմ խնդակցութիւնը «Բանասէր» գիտնական տնօրէնին :

Բանասէրի խմբագիրը Պ. Կարապետ Բասմաճեան, հայոց կաթողիկոսի հրատարակչի հայկական հնութիւնները ուսումնասիրելու համար ճանապարհորդութիւններ արեւց Ռուսահայաստանում. նա մտադիր է իր ուսումնասիրութիւնները առանձին գրքով հրատարակել, «Հայարձան» խորագրի տակ, ու «Հայարձան»ը իր անուանը արժանի դարձնելու համար, յարգելի հնախոյը պաշտաւոր է կրկին ճանապարհորդել Հայաստանի ամեն տեղերում ուր հնութիւն կայ և կարելի է գտնել : Բայց Բասմաճեան հարուստ չէ, դրամի պէտքը կայ

ԱՍՏՈՒ ԶԱՅ ԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԷՋ
 Լ'Արմէնիի մէջ կը կարգանք հետեւեալը :
 Ասիական ընկերութեան անցեալ ապրիլ 12 նիստին մէջ նախագահ Պ. Պարպիէ տը Մէնար, խօսք կուտայ Պ. Հալէվի նոր անդամ մը ներկայացնելու համար :
 Պ. Հալէվի հետեւեալ ճառը կարտասանէ :
 «Պատիւ ունիմ ներկայացնելու ընկերութեան մասնակցութեան համար, Պ. Կարապետ Բ. Բասմաճեան նախկին աշակերտ Բարձր Ուսմանց գործնական վարժա-

րանին : Պ. Բասմաճեան երեք տարի ամենագովելի եռանգով և յարատեւութեամբ հետեւեցաւ իմ գասերուս. յիշատակութեան արժանի յառաջդիմութիւն մը ցոյց տուաւ Եթովպական լեզուին մէջ որ իմ գասախօսութեանն էական նիւթը կը կազմէ և որուն կը միանայ կանոնաւորապէս վերջերս Արարիոյ մէջ երեւան ելած սարէական կամ հիմարական ուսումնասիրութիւնը. հետեւեցաւ նաեւ անխոնջ համբերութեամբ Տուրանեան լեզուաց բազմատական քերականական դասերուս. այս ժամանակամիջոցին՝ Օրխոնի և Եէնիսէի Թրքովիւնական կարեւորագոյն արձանագրութիւնք թարգմանեցան և մանրամասն կերպով լուծուեցան : Թրքերէն լեզուին մէջ իր ունեցած խոր հմտութիւնն այս գասախօսութեանց շահեկանութեան մեծապէս նպաստեցին : Յիշեալ կանոնաւոր գասախօսութիւններէն դուրս ամեն կիրակի Պ. Բասմաճեանը տունս ընդունելու հաճոյքը ունեցայ : Ատրեստանեան—Բարեւոյնեան բնագիրներու ընթերցանութեանց և մեկնութեանց համար : Այս ճիւղին մէջ եւս Պ. Բասմաճեան, աշխատութեան սէր մը և անսովոր հանճար մը ցոյց տուաւ : Քանի մը տարիէ ի վեր և խիստ զժուարիին հանգամանքներու մէջ երիտասարդ գիտնականը յաջողեցաւ «Բանասէր» տիտղոսին տակ հայերէն լեզուաւ պատմական և քննական հանդէս մը հիմնել : Այս հաւաքածոն կը հրատարակէ Հայաստանի գրական հին նշխարներն, ձեռագիրներ արձանագրութիւններ և մասնաւորապէս նախաքմենեան ժամանակի վանեան տառերով արձանագրութիւններ : Եւ այս կարեւոր աշխատութիւնը կը կատարուի շատ խնամքով և կանոնաւոր կերպով, որ կը խօստանայ արդիւնաւոր ըլլալ գիտութեան և արժանի է քաջալերութեան : Ահաւասիկ ընտրելին զոր պատիւ ունիմ ներկայացնել ձեր հաճութեան : Իմ պաշտօնակիցս Պ. Մէյնէ, որուն նոյնպէս աշակեր-

տած է Պ. Բասմաճեան հաճեցաւ ձայնակցել ինձ ձեր ընկերութեան յանձնարարելու համար զայն :

Պ. Մէյնէ երեւելի հայագէտը, իր կարգին կարասանէ հետեւալ ճառը :

«Կրնկերակցիմ Պ. Հալէվի բոլոր ըսածներուն, և ալ աւելի Պ. Բ. Բասմաճեանի նկարագիրը յարգելու : Թէեւ բազմէն հալածուած և ստիպուած իր ապրուստը շահելու, նուազ շահաւոր աշխատութեամբ, Պ. Բասմաճեան գրգռուած է այնպիսի բունեւունդով մը և միեւնոյն ժամանակ այնքան անշահախնդ իր գիտութեան և իր սպիտակ նկատմամբ որ, Պ. Հալէվի խօսած ընդարձակ ծանօթութիւններն ստանալէն զատ՝ բոլորովին զուտ գիտական հանդէս մը հիմնելու, վարելու և յառաջացնելու միջոցն իսկ գտած է. աւելին ըսել անօգուտ է անոնց՝ որոնք գիտեն թէ այս կարգի ձեռնարկութիւն մը ինչ աստիճան ճիգ և հաստատամտութիւն կը պահանջէ :

Պ. Միշէլ Թամազէֆ արտօնեալ իրաւաբանութեան մէջ, Ասիական ընկերութեան միակ հայ անդամը, չերմայէս պաշտպանեց մեր ազնիւ պաշտօնակցին ընտրելիութիւնը, և Պ. Բասմաճեան գիտնական ընկերութեան ծափահարութեանց մէջ տեղ մի ահաւանութեամբ անդամ ընտրուեցաւ :

Մեր շեքմ խնդակցութիւնը «Բանասէր» գիտնական տնօրէնին :

ՕՐԻՆԱԿ ԱՌՆԵՆԲ

Նմանը շատ քիչ տեսնուած չքերութեամբ հոս եւս սօնուեցաւ պուրկար յեղափոխութեան 25 ամեակը : Ամբողջ քաղաքը դրօշակներով զարդարուած էր, վեց հազարէ աւելի բազմութիւն մը կերթար անձամբ իր յարգանքները մատուցանելու ազատութեան գիւնդներուն՝ որոնց սուրբ ոսկորները կը հանգչին քաղաքիս Պարմուտ ըստած բլուրին ստորտը. պուրկար ժողովրդին ոգեւորութիւնը անկարագրելի էր, վազո-

բօք եղած կարգադրութեան մը համաձայն ամէն զատկարգէ արհեստաւորները եւ կամ ընկերութիւնները իրենց սիրուն գրօշակներով թափօր կազմած՝ կը հետեւէին քահանայից գասուն՝ որ կերթար հոգեհանգստեան պաշտօն կատարելու :

Մակեդոնական դրօշէն վերջ կուգար հայերու գրօշակը որ իր մեծութեամբ ամենէն աչքի գործողն էր : սեղուոյ Այս Յեղ. Գալիական թեան կօմիտէն ի յարգանս յեղափոխական զինուորներուն գեղեցիկ պսակ մը նուիրած էր, որ լաւ ապաւորութիւն թողուց պուլկար ժողովրդեան վրայ : Տեղական կօմիտէի այս գովելի անօրէն վերջը յոյժ սարսափացող զմեզ, կը շնորհաւորենք զիրենք : Ամբողջ օրը եւ գրեթէ զիշերուան մինչեւ ժամը 2 տեւեց ոպիտարութիւնը : հրախաղ, յուսալուծութիւնք խիստ փառաւոր եղան : ամէն ուրեք ուրախութիւն եւ ցնծութիւն :

Տարակոյտ չկայ որ հայերս ալ մասնակից էինք այդ բոլոր եղածներուն : սակայն այդքան բան մը չանցեցանք, եւ կամ ինչ ապաւորութիւններ գործեց մեր վրայ : նիւթ մը վարկեանական խօսակցութեան մը միայն, իսկ գործնական ո՛չինչ :

Աչքի առջ ընկնելով պուլկարներու 25 տարի առաջ ունեցած կեանքը, հարցնենք թէ ինչ ըրին անոնք : Պատասխանը շատ պարզ է : բռնութեան դէմ բողոքեցին՝ իսկ բողոքել վերջ գիտեցին գործնականին՝ յեղափոխութեան, որ միակ միջոցն է պետութեան ազատեցումը :

Միեւնոյն կեղեքութեան մեծութիւնը բարբարոսութիւնները կը գործէին հոս թուրքերը ինչպէս այսօր Հայաստանի եւ Մակեդոնիոյ մէջ : բայց հայաժողովը տարածումը բարբարոսագեցութիւնը ունեցաւ : պուլկար հարազատ քայլեր չէին կրնար անտարբեր մնալ այն վայրագ խժոճութեանց, եւ հետզհետէ հրապարակ ելան ու պարզելով յեղափոխական դրօշը առանց յուսահատելու կուսեցան բռնութեան դէմ : պատահած անյաջող-

ղութիւններէ չը յուսահատեցան, ինչպէս մենք : Հայրենիքի ազատութեան սէրը անոնց հոգեւոյն ու սրտին վրայ քանդակած էր սպասութիւն կամ մա՛հ նշանաբանը : այո՛, համոզուած էին անոնք թէ՛ պատեց արեան ազատութիւն չը կայ, համարուած էին թէ՛ ազատութիւնը ուրիշ բանով չէ կարելի ստանալ, եթէ ո՛չ արիւնով միայն : յեղափոխութեան յրօշ մը տակ կուսեցան անոնք ստանց (սեպտի) եւ առանց փառքի : Անոնց սար, անոնց փառքը, անոնց ամբողջ էութիւնը իրենց հայրենիքի ազատութիւնն էր : Ահա այդ նպատակով ճամբայ ելած, շարունակեցին մինչեւ վերջ եւ հասան իրենց քաղաքին : այսօր ազատ է Պուլկարիա, ազատ է խօսելու, ազատ է գրելու եւ իր ազատութիւնը կը պարտի իր յեղափոխական զինուորներուն : Այսօր պուլկար ժողովուրդը ճիտակցօրէն կը յարդէ իր յեղափոխականները, անոնց գարծունէութեան յիշատակին համար է որ այսօր հանուր Պուլկարիա ոտք ելած կը տունէ յեղափոխութեան 25 ամեակը : իսկ մենք հայերս, որ պուլկարներու 25 տարի առաջուան ունեցած կեանքին մէջ կը դռնուինք : ինչ կընենք : կը վարձատրենք մեր յեղափոխականները : Տէր Աստուած : վարձատրել քառարդեօք բարբարոսներէ՝ դուրս գտնութիւն ունի՞ : որչափ տարբերութիւն մեր եւ անոնց մէջ : անոնք կը կը յարգեն, իսկ մենք կատենք, անոնք իրենց յեղափոխականներու հանդէպ բռնու համակրանքով կը մերարբերին, իսկ մենք վատութեամբ թող որ չենք յարգեր մեր յեղափոխականներու յիշատակը որ մեր ամենամեծ յանցանքն է : այլ պախարակելով յաճախ վատ մակդիրներով կարատաւորենք անոնց սուրբ եւ պանծալի անունը : հայրենիքի ազատութեան սիրուն զոհուողներուն յիշատակը վատ պահելու եւ միշտ տանելու փոխարէն՝ անգիտակցաբար քննադատելու կըլլանք անոնց գործերը : եւ որ ստակալի է չենք թո-

ղուր որ անոնց սուրբ սովորները հանդիստ մնան զերեւումսին մէջ : կուսակցական պայքար մը՝ եղբայրասպան կոխ մէ՛ որ՝ մուտ գտած մեր մէջ օր քան զօր կը յառաջանայ եւ մենք չենք հասկնար թէ մեր ուժերը կը սպառին, մեր տունը մեր ձեռքով կը քանդուի : Փոխանակ յեղափոխութեան յառաջընթացութեան սատարելու, նիւթապէս եւ բարոյապէս աջակցելու անոր, քակել, քանդել այդ կարեւոր մարմինը մեզիցնել, ահա մեր կարգ մը խելացի եւ բանգէտ կարծեալներու գործը : Ժողովուրդը գիտակցութեան հրաւիրող կարգ մը թերթեր նոյնիսկ հակա-յեղափոխական լեզու մը կը գործածեն, որ ոչ մի պարագայի մէջ ներքի չէ, այլ եւս պէտք է հարստապէս համոզուինք որ առանց արեան ազատութիւն չիկայ, առանց յեղափոխութեան մենք միշտ գերի ենք եւ պիտի մնանք : ազատութեան միակ ճանապարհը յեղափոխութիւնն է : Բաւ է այլ կախարհափոխական ցեղեր : բաւ է որչափ յուսահատութեան մասնեցիք ժողովուրդը : եթէ չէք ուզեր աջակցել, գէթ լսեցէք : կամ լաւ եւս պատրաստեցէք : հեռու ժողովուրդեան մէջ զայնակողութեան սրտով ցանկէ : Հայութեան յոյսը յեղափոխութիւնն է : յեղափոխութիւնն է որ վերջ պիտի գնէ մեր այժմու թշուառ կացութեան : Այսպէս ըլլալը համոզուեցէք եւ վերջ դէք ազգակործան ընթացքին, եթէ ոչ ժողովուրդը գիտի թէ ինչպէս պիտի վարձատրէ ձեզ :

ՎԱԷ
Իսթիմա, 23 Ապրիլ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱԻՐԻՉ, 26 Մարտ

— Ես տգէտ եմ, դուք էլ տգէտ մնացէք !
Այս է լինում իրան կրթութեան, ընտիր չըջանում գաստարակած հա-

մարդ վարժու հու վերջնական զայն տասխանը իր աշակերտութիւնը : մի վարժու հու ուրիշ խնամքին է յանձնարուին թաւրիզի Հայու հեաց Բարեպաշտ ծական ընկերութիւնը իր Լիւալու յուժ ունեցած արհեստանոցի 18 հասունացած օրիորդները կրթութեան ու գաստարակութեան գործը ծաւալի՝ իրողութիւն : բայց անոնք շատ քիչ փա՛ստ :

Սկզբներում օրիորդ կարծէք զոչ ուրիշ իր մտաւոր սնանկութիւնը, որ մենք խոհեմութեան նշան ենք համարում, իր խնամքին յանձնարուին աշակերտութիւնը խորհուրդ էր տալիս : եւ մինչեւ իսկ առաջնորդը էր ինքնազարգացմամբ պարապելու : եւ քիչ շատ մտաւոր սնանկութեան ընկերութեան արթնական դաստիարակութիւններին, Լիւալայի զոչ ուրիշ իր գրագործանք ընթացանութեան գրքեր ստանալու եւ նոյնիսկ խնդրել նոյն պարտքերի Պ. տեսչից որ չարթնական մի ժամ քարտեզներ գաստիտուի առողջապահական եւ իրանց համար կարեւոր գիտելիքները մասին : Այս ամէնը իրագործեցին : եւ որոշ ժամանակ ամենայն ճշգրտութեամբ կատարում էին : Անշուշտ թէ՛ աշակերտութիւնը եւ թէ՛ վարժուները, որ միշտ նրանց հետ միասին յաճախում էր յիշելու տեղերը, իրանց այդ խելացի քայլի զգայի օգուտները տեսնում էին : Բայց ո՛վ հրատարակեց թէ՛ն : Յանկարծ վայժուէր ինչ որ անձնական ընդհարումներ ունենում այնպիսի մարդկանց հետ, որոնք այսպէս թէ այնպէս կապ ունեն իրանց յաճախած հիւնարկութիւնների հետ : վարժու հու նորից ջիղը շարժում է՝ վրէժ պէտք է լուծել : Ու մի զեղեցիկ օր շտապուկ է արհեստանոց եւ խստիւ արգիւտ ասելով :

— Այսուհետեւ ձեզանից ո՛չ ոք չը համարձակվի յառաջի գաստարակութիւններին յաճախել : զայրոյժ գրագործանք գրքեր ստանալ, տեսչի գաստերին գնալ : դրսում այս ի՛նչ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌԻՍԱՆՈՂԸ

(Շար. նախ. քրեկն եւ վերջ)

Միշտն զիս իր խօսքը հազիւ էր վերջացրել, երբ ներս մտաւ մի միջանասակ գեր, ճերմակ դեմքը ամբողջապէս : նա ամենքին լրջաբար բարեւելով ասեց :

— Հը, էլի ինչ էք հաւաքվել : ամենքիդ տունն էլ գնացի, մարդ չը գտայ եւ եղբակցորդի որ անպատճառ Միշտ մօտ կը լինէք :

— Շատ լաւ արիւր եւ ժամանակին եկար, պատասխանեց Միշտն : այստեղ մի կարեւոր խնդիր է բարձրացել, «ազգային» խնդիր : Դու մեր մէջ յայտնի «ազգասէր» ես, քո կարծիքը կարող է մեծ կշիռ ունենալ :

— Ինչ խնդիր է, ինչ խնդիր, տղերք :

— Այստեղ հարց է գրված, թէ հայ ուսանողներս ինչ դիրք պէտք է բռնենք դէպի հայկական յեղափոխութիւնը : եւ ինչ չափով պէտք է մասնակցենք այդ գործին :

— Վա՛, ի հարկ է պէտք է մասնակցենք, եւ ամեն բան ոտքի տակ տալով : ապագայ, կեանք, անհատական երջանկութեան երազներ : եւ որքան շուտ, այնքան լաւ : Ես էլ այդ խնդրի պատճառով էի այսօր ձեզ փնտրում : Ա քաղաքի յեղափոխական մարմինը նամակ եմ ստացել, որով ինձ առաջարկվում է ուսանողների մէջ մի մարմին կազմել, Դուք դիտէք որ ես նրանց հետ միշտ յարաբերութեան մէջ եմ գտնվում :

— Շատ լաւ, բայց աւելի լաւ չէ՞ր լինի որ այդ մարմինը ինքը մարդ ուղարկէր մեզ օր, կամ թէ մեզ առաջարկէր որ մի մարդ ընտրենք ուղարկելու իրեն մօտ մի լաւ գաղտնի կազմելու համար թէ գործերը ինչ վիճակի մէջ են գտնվում եւ ըստ այնմ մասնակցելինք : Դուցէ ձեզանից աւելի ազգեցիկ եւ աւելի կարող մարդիկ կան այստեղ, խնդրեմ չը վերաւորվէք : մարմինը ձեզ է ճանաչում, բայց այստեղի բոլոր ուսանողներին չէ ճանաչում :

— Իրաւունք ունէք, նկատեց «ազգասէրը» : բայց ինչո՞ւ այդ ձեւակաւնութիւնների ետեւից ընկնել, քանի որ նրանք արդէն ինձ ճանաչում են, եւ գիտեն որ ես օգտակար կը լինեմ նրանց : Շատ լաւ : ես կը գրեմ նրանց, որ ուսանողները խնդրում

են կամ դուք մի պատգամաւոր ուղարկէք, կամ թէ մենք այստեղ մէկը ընտրենք եւ զրկենք ձեզ մօտ կանոնաւոր յարաբերութիւններ ստեղծելու համար : ուրեմն գնամ եւ իսկոյն նամակը գրեմ :

— Չէ, մի քիչ սպասիր, քանի որ արդէն վիճաբանութեան տակ մի հարց կայ, խօսենք, խնդրեմ մի լաւ ձեռնարկ : ինչ կայ, գիշերն էլ կարելի է գրել պատասխանեց Միշտն :

— Նստիր, նստիր, Միշտն (ազգասէրի անունը), կրկնեցին բոլոր ուսանողները միասին :

— Չէ, գնամ, վիճաբանելու ինչ պէտք կայ : պէտք է գործնական լինել, Մեր վիճաբանութիւնները որքան էլ յաջող կերպարանք ունենան յեղափոխութեան մասին, ոչ մի գրական հետեւանք չեն կարող ունենալ, մինչեւ որ մենք կապով չը լինենք յեղափոխական մարմին հետ : Աւելի լաւ է շտապեմ նամակը գրել, որ խնդրեմ շուտով գրական հոդվելով զրկվի, պատասխանեց «ազգասէր» Միշտնը : եւ ընդհանուր ուղղոյն տալով դուրս եկաւ սենեակից : «Ազգասէրի» դուրս գնալուց յետոյ բոլորն էլ թիթեկ կերպով յարձակում գործեցին Միշտի վրա յայտարարելով :

— Ինչ չոր մարդ ես, Միշտ, մի՞թէ

կարելի է այդպէս վարվել նրա պէս մի ուսանողի հետ : չը թողիր որ մարդ իր ասելիքը կարգին կերպով բացատրի, սառը ջուր լցրիր զլիւթին :

— Թողէք, Լուսած սիրէք, ես այդ մարդին բողոքովն չեմ հուսաւում : կեղծիքը վրայից թափում է : փայլուն է, շատ արիստօկրատ է : Ես չեմ հաւատում որ դա իր եղբունը անգամ : Չէ՞ք յիշում, ուսանողական խառնակութիւնների միջոցին պոչը քայց, հիւանդ ձեւանալով, այնինչ առաջ ամենից տաք խօսող ինքն էր : Բայց վերջը կրկին գործը գրուակեց : խառնակութիւններից յետոյ ինքն էլ յօժար կամքով համաշարաւից դուրս եկաւ ոտից գլուխը միջակութիւն է : այդ քայլով նա՛ թէ ուղղակի կառավարութեան դէմ չը գնաց, եւ թէ ուսանողական շրջանում բողոքողի տիպոսը ընդունեց : եւ զարմանում եմ որ Ա քաղաքի յեղափոխական մարմինը, որոնց մէջ բաւական անկեղծ յեղափոխականներ կան, չէ հասկացել այս պարոնին եւ այդ տեսակ մի գործ է յանձնում :

— Էհ, Միշտ, առաջին օրից այդ մարդի ասողը քո ասողին չը յարմարվեց : Դու որ առ հաստակ այնքան ներողամիտ ես դէպի մարդկային պակասութիւնները՝ Միշտնի

այսին ինչ անձնատուրու թիւներին բա-
 երեւել եւ այլն . . . Եւ մի
 անպատկան հայհոյանք վերջիններին
 հասցէին աշակերտու հիւնքի ներկա-
 յութեամբ .
 Եստ պարզ է . որ այս անբնական
 դրութիւնը պէտք է ապացնէր խեղճ
 աշակերտու հիւնքին . որոնք անմի-
 ջապէս հարց հարցի ետեւից թափում
 են . թէ ինչո՞ւ . օրիորդ . չէ՞ որ ա-
 տաջ դուք էիք մեզ խրախուսում .
 հիմա ինչ պատահեց .
 — Ես այդպէս եմ ուզում . ինչում
 է նրա կարծ եւ կտրուկ պատաս-
 խանը .
 — Մեզ էլ բացատրեցէ՛ք . օրիորդ .
 եթէ մի վառակար բան կայ մեր ա-
 ռածի մէջ . իսկոյն յետ կանգնենք .
 թէ չէ անմեղ տեղը ինչո՞ւ . զրկել մեզ
 այն բանից . որի մէջ մինչեւ այժմ
 բացի օգուտից ուրիշ բան չենք տե-
 սել .
 — Ո՞վ չի ուզում հնազանդել իմ
 պատէրներին կարող է արհեստանո-
 ցից հեռանալ . ինչում է վարժուհու
 պատասխանը իրեն . բացատրու թիւն
 նրանց առած հարցերին .
 Աշակերտու հիւնքին էլ մնում են
 շարած իրանց վարժուհու խեղճուկ
 լողիկայի վրայն . Կարծեմ ընթերցողն
 էլ սրանց հետ միասին պիտի գայ այն
 րակացութեան . որ անձնական կրթե-
 րին զոհել ընդհանուր օգուտը . եւ
 այն էլ այս անմեղ աղջիկներին . ո-
 րոնք ո՛չ մի անհուծութիւն չունեն ի-
 րանց վարժուհու անձնական շահերի
 հետ—ազիտութեան արդիւնք է եւ
 այն էլ հակայ պիտու թեան .
 Հետեւեալ օրը մի քանի աշակեր-
 տուհիւներ . որոնք աւելի խելացի են
 գտնուում քան թէ իրանց սգէտ վար-
 ժուհին . չուզենալով հնազանդել նրա
 կոյր պահանջներին հեռանում են
 արհեստանոցից պատրաստելով բո-
 ղաք ներկայացնելու վարժութեան .
 իսկ միւսները ոչխարներին նման չա-
 րած երբե՛ն էլի հարց են ուղղում
 վարժուհուն . թէ ինչո՞ւ այսպէս ե-
 ղաւ . օրիորդ .
 — Այնպէ՛ս . ես սգէտ եմ . դուք էլ

սգէտ մնացէ՛ք . ինչում է հակայ սգէ-
 տուհու վերջին խօսքը .
 Վարժուհու խիղճը հանգիւտ է .
 կամ այն վարչութեան խիղճը . որ
 փողերը վատնելով այդ տեսակ վար-
 ժուհի է պահում .
 ՀԱՄԻՆ
 ՀՕՐԷՆՍ . 13 Ապրիլ
 Լօրէնսը Ամբրիկայի մէջ . ազ-
 գային բարենպաստակ գործերու
 վերաբերմամբ ամենէն յառաջ-
 դիմականն է . Հոս ամենաշատ
 թիւ կազմողներն են Խարբերդ-
 ցիք . Չմշկածաքցիք եւ Չիւնկիւշ-
 ցիք . ասոնք զատ զատ իրենց
 թափի . գիւլի եւ քաղաքի համար
 կազմած են ընկերութիւններ .
 Որքանամ . կրթական եւայն .
 ասոնցմէ զատ . ինչպէս ժամանա-
 կին գրած եմ . կայ եւ ընդհա-
 նուր որքանամ մը որուն ան-
 զամները 80ի կը հասնին եւ ունի
 140—150 աւար . նաև գրագա-
 րան մը եւ 310 հատոր գիրք .
 18 աղագային թերթեր եւ 80 առ-
 լարի շափ գրամ ունի . 75—80
 անդամով լսարան մը ալ ունինք
 որուն անունը կայ ինք չկայ .
 Քաղաքիս մէջ 300 ի մօտ պան-
 դուխտներ կան . ասոնցմէ զատ
 30—35 ընտանիք ունեցողներ .
 Գեղափոխական կազմակերպու-
 թիւններ ալ ունինք . Հնչակեան .
 Գաշնակցական . Մարտական ու
 այս երեք կազմակերպութիւննե-
 րը միացնող «Ժողովրդային Մի-
 ութիւն» որ վերջերս կազմուե-
 ցաւ . Այս վերջինը հակառակ իր
 նպատակին ու տենչին յարատե-
 ւութիւն չխօստանար . ինչո՞ւ .
 որովհետեւ քանի մը հակառակ
 տարրեր իրարու քով եկած են
 բան մը ընելու . Այս «Ժ. Միու-

թիւն»ը թէև թիւով շատ է .
 բայց բան մը չէ քանի որ մէջեր-
 նին համեմատելով չկայ . ո-
 ղովհետեւ կազմուած է իրար չը
 հասկցող տարրերէ . Ինչպէս ըսի
 վերը . 300ի շափ հայեր կան . ո-
 ղոնց 100ը . ոնէ միլիթիւն նէ
 տէլլէթիւն խայրի վարձ . ինչպէս
 կըսեն . Ապա ո՞ւր մնաց վարդա-
 պետը եւ Հոգաբարձուն . Վարդա-
 պետը իր հացը նաշխելու համար
 ապօրինի ընտրութիւն մը ըրաւ
 ժամանակին Տէն մինչեւ 21 քուէ-
 ով օրինաւոր («Մ.Մ») հոգաբար-
 ձութիւն ընտրեց . հակառակ
 անոր որ քուէարկու անդամոց
 թիւը կը կազմէ 105 . Այս ապօ-
 րինի հոգաբարձութիւնը 7 ամիս
 յարասեւեց եւ լուծուեցաւ . հիմա
 նորը ընտրուեցաւ գրեթէ նոյն
 ձևով . Այս ալ շատ չի քշեր պիտի
 մարի . ու ըմբիշ վարդապետը
 ձուկի պէս ցամաքը պիտի մնայ .
 Քանի մը շաքարածեր առաջ լսե-
 ցի թէ հրամարական տուած է .
 վա՛յ խորամանկ . կուզէ պատուով
 փախիլ . Այլ պատիւ չի մնաց
 եւ . մարդը գլխուն զալիքը կը
 գուշակէ «գող սիրաւը գող» . Լօ-
 րէնսի ժողովուրդը այլեւս ճանչ-
 ցաւ զինքը եւ գիտէ վարուելու
 եզանակը .
 Արդեօք այս անգամ ո՞ւր պիտի
 առնէ իւր շունչը . վայ այն խեղճ
 ժողովրդին որ զինքը չի ճանչ-
 նար . Այս անգամ այս շափ .
 ԽՊՏԵԱԼ

Հայ վարժարանական տարե-
 գրութեանց մէջ գուցէ նմանը
 չտեսնուած եղերական միջա-
 դէպի մը ակնատես վկան եղած
 ըլլալով . աւելորդ չեմ սեպեր . եւ
 նոյնիսկ անհրաժեշտ կը համա-
 րեմ հոս երկտողով մը պարզել
 այդ ցաւալի դէպքը .
 Անցեալ շրեքը քաղաքի օր . Պ .
 կրօն Միջադէլեան .— որուն «Հայ-
 կական կրթարան» անունով հիմ-
 նած վարժարանին մէջ դասա-
 տուութեան պաշտօնը վարած եմ
 մէկուկէս տարի շափ— իմ ներ-
 կայութեանս . իր հիւրասենեկին
 մէջ . ուղեց յարձակիլ դպրոցի
 վարժուհիին վրայ . որովհետեւ
 այս վերջինը իր 500 Քր. իր
 պահանջքէն մէկ փրանք ուղեւ
 աններելի (!) յանդգնութիւնը
 գործած էր . Տնօրէնը բուն մո-
 լեգնութեամբ վաղեց յափշտա-
 կել սենեկին վառարանին մար-
 մարէ կախարիչը՝ զայն օրիորդին
 գլխուն վրայ վշրելու . բնական-
 նաբար այդ կատաղած մարդը
 զսպելու համար ամէն ճիգս թա-
 փեցի . իրաւ է որ երկրորդ անգամ
 ուղեց բռնել մարմարը . բայց
 դարձեալ չյաջողեցաւ մինչեւ
 օրիորդին գլխուն հասցնել զայն .
 վերջապէս կրցայ յարակից սեն-
 եակը հրել զինքը եւ վերահաս
 վտանգէ մը ազատել օրիորդը .
 Հա՞րկ է ըսել որ այս վերջինը՝
 իր վրայ գործադրուելիք սպա-
 նութեան այս փորձէն ահեղապէս
 ցնցուած՝ երկու ժամու շափ ջղա-
 յին զարհուրելի տազնապի մը
 մատնուեցաւ ու բժշկական դար-
 մաններ հարկ եղան զինքը օթա-
 փեցնելու համար .

վերաբերմամբ առաջին օրից այդպէս
 խիստ եւ եղել . պատասխանեց ուսա-
 նող Մատիկովը .
 — Չը լինի թէ նախանձում ե՛մ .
 լսել եմ որ այդ պարոնը մի քանի տեղ
 այդպէս է ասել . դուք բոլորդ էլ գի-
 տէք որ ես նախանձոտ մարդ չեմ .
 եւ դրան նախանձելու ոչ մի պատ-
 ճառ կայ . Առաջին օրից այդպէս եմ
 վարվել . որովհետեւ հէնց առաջին
 օրը զգացել եմ թէ այդ մարդը ազ-
 գասիրութիւնը մօտապօլ է ուղում
 դարձնել . առանց տրամադիր լինելու
 ազգի համար ու եւ զոնդուութիւն ա-
 նելու . ճիշդ է . զեռ հիմա ձեզ հաւա-
 տացնելը զժաւր է . բայց ապագան
 չուտով կը հաստատի այն . ինչ որ ես
 հիմա կարծում եմ . երանի թէ ես
 սխալված լինեմ . Բայց մենք հիմա
 կրկին մեզ զբաղեցնող նիւթի մա-
 սին խօսենք . Ինչպէս առաջ յայտ-
 նեցի . հիմա էլ ասում եմ որ գործող
 մարդը . առանց ինչ պէտք է անենք
 հարցը տալու . կերթայ գործի վայրը .
 գործի մարդկանց մօտ . եւ այնտեղ
 իր բաժին գործը կը վերցնի . դրա
 համար էլ ես առաջարկում եմ այստեղ
 իսկապէս գործել ուզող ուսանողնե-
 րից մի մարմին կազմենք . պատգա-
 մաւոր ուղարկենք . Ա քաղաքի յե-
 ղափոխական մարմինն . եւ եթէ տես-
 նենք թէ իսկապէս դրական գործ

կայ . ամեն բան թողնենք եւ գործի
 գնանք .
 — Բայց այդ ամեն բան թողնել եւ
 գնալը այնքան էլ դիւրութեամբ չի
 կարելի վճել . ժամանակի պէտքը
 կայ պատասխանեց Մատիկովը .
 — Ի հարկ է . վրա բերին միւս ու-
 սանողները . պէտք է մտածել . պէտք
 է լրջօրէն ուսումնասիրել խիղճը .
 կեանքի եւ մահու խնդիր է . հասա-
 րակ բան չէ .
 — Ես մտածելուն հակառակ չեմ .
 առարկեց Միշան . ես էլ չեմ առա-
 ջարկում որ հէնց հիմա . իսկոյն վա-
 ղենք . Ես առաջարկում եմ նախ եւ ա-
 ռաջ որոշենք թէ՛ մենք քաջութիւնը
 կուենանք մեր ապագան եւ կեանքը
 վտանգի ենթարկելու . եթէ հայրե-
 նիքի փրկութեան գործը իսկապէս
 այդ զոհողութիւնը պահանջում է .
 Ուրեմն նախ մեր ուժերը . մեր անձ-
 նական բարոյական ուժերը պէտք է
 կշռենք . յետոյ պէտք է գործի հետ
 մօտիկից . նրա մէջ մտնելով ծանօ-
 թանար . եւ ապա գործի սկսենք .
 ինչպէս ասացի . յեղափոխական գործի
 հետ ծանօթանալու համար նրա մէջ
 պէտք է մտնել . ժողովրդի փրկու-
 թեան կուի անհրաժեշտութիւնը
 ըմբռնելու համար անձամբ ժողովրդի
 վերջերը պէտք է շօշափել եւ համոզ-
 վել . Ով այդ երկու պայմանները չը

կատարած իրեն յեղափոխական է
 հռչակում . սուտ է խօսում եւ յեղա-
 փոխութեան գործին վառ է տալիս .
 Յեղափոխութիւնը տատանվող . անո-
 ղոյ մարդկանց գործունէութեան աս-
 պարկ չէ . նաեւ այնպիսի մարդկանց
 համար . որոնք դրական զոհողու-
 թիւններ ընդունակ չեն .
 — Բայց այդ տեսակ գիտակից .
 վերլուծող եւ անձնագոհ յեղափոխա-
 կաններ շատ քիչ կարող են լինել .
 միջամտեց Մատիկովը .
 — Վնաս չունի . թող քիչ լինեն .
 բայց միշտ եւ շարունակ լինեն . էհ .
 այսօր բաւական խօսեցինք այդ մա-
 սին . հիմա ես գասերովս պէտք է
 պարսպեմ . անշուշտ դուք էլ նոյնը
 պէտք է անէք . Բաժանվենք . եւ .
 մի քանի օրից յետոյ . թող մեզինց
 նրանք հաւաքվեն . ովքեր իրենց ըն-
 դունակ են զոհում իսկական յեղափո-
 յականներ լինելու .
 Ուսանողները սկսեցին Միշանի
 անից գուրս գալ . Միշան ընկերների
 գուրս գնալուց յետոյ . թէյի բաժակ-
 ները եւ սամալարը վերցրեց սեղանի
 վրայից . դրեց սենեակի անկիւնը .
 գիրքը առջեւը ստաւ եւ սկսեց պա-
 րապել .

Ուսումնական տարին լրացաւ . Մի-
 շանի մօտ այլեւս հայ յեղափոխու-
 թեան մասին ժողով տեղի չունեցաւ .
 այդ տեսակ ժողովներ տեղի էին ու-
 նենում միայն «ազգասէր» ուսանողի .
 Միշանի տանը եւ նախադասու-
 թեամբ . Միշան չէր մասնակցում ու-
 շարունակ քթի տակից ծիծաղում էր .
 երբ իմանում էր այդ ժողովների մա-
 սին .
 «Ազգասէր» ժողովների միջոցին
 ոչ մի առիթ չէր բաց թողնում Մի-
 շանի հասցէին ծագրական խօսքեր
 ուղղել . եւ նրան հայ ժողովրդի հա-
 մաղ մի կորած անդամ հռչակել .
 Երկու տարի յետոյ «ազգասէր»
 Միշանը՝ կովկասի մայրաքաղաքում
 պաշտօն էր գտել եւ հարուստ աղջիկ
 էր փնտում . իսկ Միշան ճանապարհ
 էր ընկնում Տաճկաստան . յեղափո-
 յութեան վայրը .
 11.07.0

Գարոցը գերազանցապէս ազգային հաստատութիւն մը ըլլալով երբոր այսօրինակ դէպքի մը թատերավայրը կը հանդիսանայ, անհրաժեշտ է որ հայ հասարակութիւնը կանխահոգ միջոցներ ձեռք առնէ որպէս զի այս կարգի գայթակղութիւններ չկրկնուին հոն (°) :

Ե. ՍՐԲԱՔԷՆՆԱՆԻՅԱՆ

ՆԱԽԵՍ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տէր խմբագիր,

Կարգացինք «Իրաւունք»-ի շորեքշաբթի օրուան թիւին մէջ Պ. Կրօն Միջալէլեանի յիշեալ թերթի խմբագրութեանը զըրկած նամակը :

Նախ քանի որ Պ. Կրօն Միջալէլեան նամակ մը ստացած էր Օսկեսայէ «չուրջ երկու շաբաթէ ի վեր, ինչո՞ւ համար իր անձին ու հաստատութեանը դէմ եղած անիրաւ (°) :» յարձակումներուն անմիջական պատասխան մը տալ չփութաց :

Երկրորդ՝ Պ. Կրօն Միջալէլեան որ—ինչպէս ուրիշ ու է գատարակ — պարտականութիւնը ունի իր աշակերտներուն բարոյականի ճամբան միայն ցուցնել, ինչո՞ւ համար իր ըրած մէկ մեծ (°) :» բարիքը կը հրապարակէ :

Երրորդ՝ Պ. Կրօն Միջալէլեան առիթէն օգտուելով կը ծանուցանէ ի գիտութիւն հետաքրքրուողներու թէ վարժարանին հիմնարկութենէն ի վեր 60 ի չափ ձրիավարժ աշակերտներ ունեցած է (°) :» որոնցմէ մէկ քանի հատեր ալ իր սեղանէն կերակրուած, սնած և հագուստ ու կապուստ ընդունած են : Պահած է նաեւ գիշերօթիկ աշակերտ բոլորովին անթօշակ և կիսաթօշակ (անշուշտ տասնեակէ մը աւելի (°) :» :

Չորրորդ՝ գալով Օսկեսայէ Իրաւունքի խմբագրութեան զըրկուած ծանօթ պատուար վաճառականի մը նամակին «ազբատ երախաների» համար քանի մը ազգայիններէ մաս մը դրամ հանգանակած է» ըսելուն, սա իր արժէքը կը կորսնցնէ քանի որ Պ. Կրօն իր ծանօթ բացատրութեամբը խոստովանած է թէ յանուն հաստատութեանը հանգանակած է և ոչ թէ «ազբատ երախաների» համար :

Արդ՝ խնդրենք Պ. Կրօն Մի-

(°) Հստակ ենք որ Կրօն Միջալէլեան մտադրութիւն ունի կրկին աշակերտներ ունենալ, միայն ուրիշ ձեւի տակ :

Յուսով ենք որ այսուհետեւ ոչ մի կարգին ծնող, այդ վարժուի ծնող տնօրէնին աշակերտ չի յանձնել :

Այդ մարդին բոլորովին պէտք է վանել մանկավարժական օսպարէզից :

քայլերանէն որ հաճի տեղական թերթերու միջոցաւ բոլոր այս 60 (°) :» ձրիավարժ ուսանողներուն անուններու ցանկը հրատարակութեան տալ, որպէսզի գոհացում տուած ըլլայ մեզ հետ բազմաթիւ հետաքրքրուողներու ալ :

Հեատրբրուողներ

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Արաբկիրի առաջնորդ Մուշեղ Մ. վարդապետ պատրիարքարանէն 100 ոսկի խնդրած է արհեստներու աւելի վարկ տալու համար :

— Եղեւսի կարօտեաններուն համար պատրիարքարանէն նպաստ խնդրուած է :

— Ռուսուքէն Արեւելքի կը գրեն :

«Ճատ զարմանալի է ու տարօրինակ կը գտնեմ այն խոր լուսութիւնը զոր Պ. Մասիս և Պ. Դիգրիտող թերթիք Ռուսուքի քրննադատ թղթակիցները կը պահեն տեղիս թաղ. Խորհուրդին ներկայացուցած գեղեցիկ մէկ հաշուեկշիռն նկատմամբ : Այդ լակոնական ձեւով պատրաստուած հաշուեկշիռը իր ելքին մէջ կարգ մը աչքի զարնող ու քրննադատութիւն վերցնող բաներու հետ կը պարունակէ և 5000 Ֆրանքի խոշորեկ գումարը, զոր ցոյց տրուած է իբր տոկոսի տրուած՝ առանց նշանակելու որ ո՞ւր և երբ տրուած ըլլալը : Այն պահուն և կամ պահեն քիչ մը տուալ երբ կառավարութիւնը հայ վաճառականի մը սնանկութեան պաշտօնական զեկուցումը կընէ, ուր հայ ազգն ալ պահանջատէր ներկայացուած է, սնանկ վաճառականէն մեր թաղ. խորհուրդին այդպիսի հաշիւ մը եկեղեցիին ղուռը ցուցադրելու փութկոտութիւնը շատ խորհրդաւոր է :

Արեւելքի նամակագիրը քանի մը տողէ ետք իր գրութիւնը այսպէս կը վերջացնէ :

Տարակոյս չը կայ որ պատ. թաղ. խորհուրդը պիտի փութայ այս մասին պէտք եղած բացատրութիւնները տալ ու միամտել հասարակութիւնը որ գայթակղած է» :

Ռուսուքի թաղ. խորհուրդը, եթէ չենք սխալիր, չինական հիմնարկութեան պէս բան մըն է, տասնեակ տարիներով ազգային եկամուտները նոյն մարդոց ձեռքով կամ անոնց խնամիններուն ձեռքով կառավարուած են :

Տեսնանք այդ հաշիւի տակէն ինչպէս պիտի ելլայ թաղական խորհուրդը : Մենք ալ հետաքրքիր ենք :

— Մանզումէի էֆքեար օրա-

թերթը որ անպայման կերպով դադարման դատապարտուած էր նորէն պիտի հրատարակուի :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Գ Ի Ա

Ինպանները Բ. Դրան կողմէ փոստաներու վերաբերմամբ զըրկուած նօթան, որուն մէջ օտար փոստային կառավարիչները կը մեղադրուին մասնանկողութիւնը դիւրացնելուն մէջ, ետ զարձուցած են արտաքին գործը նախարար Թէֆթի փաշային գրութեամբ մը որով կը յայտարարեն թէ այդ նօթան կարելի չէ ընդունիլ, որովհետեւ պետութեանց պաշտօնեաններուն հասցէին վերաւորիչ մեղադրանքներ կը պարունակէ իր մէջ, Ինպաններ կը մերժեն այդ խնդրին մասին գրադրութեան մէջ մտնել և կը պահանջեն որ Բ. Դուռը գոհացում տայ եւրոպական փոստաներու դէմ բռնած ընթացքին համար :

Պուլկարական սահմանադրի փոստային պաշտօնեանները հրաման ստացած են եւրոպայէն եկած պայուսակները չը յանձնել թուրք պաշտօնեաններու :

Օտար փոստաներու մասնաւոր պատուիրակներ եւրոպայէն եկած պայուսակները Պօլիս պիտի տանին :

— Պօլիսէն եկող ճամբորդներու համար քարանձինան վերցուած է, որովհետեւ 10 օրուան մէջ ժանտախտի կասկած տուող քէպք մը չէ պատահած :

— Ապրիլ 27ին Պօլսէն «Թան»-ի կը հեռագրեն հետեւեալը. գեսպանները իրենց կառավարութիւններէն հրահանգ կուպան փոստային ընդհատումէ մասին և վաղը պիտի խորհրդակցին :

Առայժմ օտար երկրներէ եկած փոստան գիրութեամբ կը ընդունուին, սակայն թուրք փոստային վարչութիւնը չի ընդունիր դուրս գացող սուրհանգակը :

Այս չար գործին աղբիւրը Փարիզի գեսպան Միւնիւր պէյն է որ պալատ իմացուցած է թէ երիտասարդ թուրքերը մտադիր են մայիսին կամ յունիսին ցոյց մը ընել Պօլսոյ մէջ, և աւելցուցած է որ կառավարութիւնը պիտի ջանայ հակառակ, Պօլսոյ որ ժէօն թիւրքերը յարաբերութեանց մէջ կը գտնուին Բարիզի ժէօն թիւրքերու հետ :

— Սուլթանը իզլէթ պէյին կը պատուիրէ գիտնալ այդ ժէօն թուրքերը, իզլէթ ալեւէն լուսմիջոցը կը համարէ օտար փոստային պայուսակները բանալ, կըսուի թէ արդէն բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցած են :

— Բարիզի թուրք գեսպան խնդրանքով Ձուրցերիոյ կառավարութիւնը կարգադրած է ժնէվ հրատարակուող թերթերուն խմբագիրները հրապարակելու :

Խմբագիրները հարցաքննուեն ոստիկանական գովաբերի կողմէ : Հարցաքննիչը իր նօթեանց հետեւանքն Ձուրցերիոյ նախարարին տեղեկացուէ :

Միւնիւր պէյ թուրք խմբագիրները մեղադրած է Սուլթանը զէմ հայհոյանքներ տպելու :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Ամսոյս 26 ին կառավարութիւնը ծախքով կատարուեր է կրթական նախարար Սլավէյքօֆի թաղմը :

Նոյն օրը ժամը 5ին, կատարուեր է և կրօնօրէն թաղու շատ շքեղ կերպով. Իշխանը շքախումբով միասին մասնակցէ թաղման հանդէսին :

Իրականազը ամբողջովին պատկաներու մէջ է եղեր. Իշխանի կրմէն ալ թարմ ձողիկներէ պատմը դրուած է սամակազրութեան «Իմ հին և հաւատարիմ բարեկամիս» :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Թիֆլիսի մէջ դորձաւորները կարմիր դրօշակով քաղաքի մէջ հրապարակներէն միոյն վրայ հաւաքուեր են Ապրիլ 22ին. ստականները ուղեր են զանոնք ցըլուել, սակայն հալածուեր են :

Վերջապէս ոստիկանութիւնը կարմիր դրօշակը կրցեր է խնդրել և հրապարակը մաքրել. Խոռվութեան միջոցին երկու կողմէն մարդիկ զարնուեր են, զանակու և ստորճանակով. Նահանգապետը ժանտարմաներով և վաշտով զինուորներ կարգը վերահաստատուեր է :

41 հոգի ձերբակալուեր են առանց մէջ կան ուսանող մը խմբովի համալսարանէն, երկու ուսանող ալ Պեթերսպուրկի համալսարանէն, որոնք ուսանողական վերջին խոռվութիւններու ատեն արտաքուստած են :

— Թօլսթոյ իրեն համակրական ցոյց ընող ուսանողներու թելադրած է համալսարան չեղբերաւունալ, մինչեւ որ զօրաբաժիններու մէջ տեղաւորուան ուսանողները ետ չը դարձուին :

ОТГОВОРНИКЪ:

Д-ръ М.Х.Г.РДИЧЪ ВАРГАНЪ

Печ. «Взаимность» — Варна.